Գրանցված է ԼՂՀ արդարադատության պետական
վարչությունում «06» հոկտեմբերի 2003թ.
Պետական գրանցման թիվ 216

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

«16» սեպտեմբերի 2003 թ. թիվ 41/Ղ

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԵՐՈՎ ՏԱՐԱՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՉՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՏԱՐԱՆԵՐՈՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎՈՂ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՑԻԶԱՅԻՆ ԴՐՈՇՄԱՆԻՇԵՐՈՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմավորման մասին» N 138 որոշման 3-րդ կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել «Մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարաներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման» կարգը:

Հարկային պետական
վարչության պետ
հ/ծ 3-րդ դասի պետական խորհրդական Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հաստատված է՝
ԼՂՀ հարկային պետական վարչության պետի
«16» սեպտեմբերի 2003թ.
թիվ 41/Ղ հրամանով

ԿԱՐԳ

Մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարաներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է ի կատարումն ԼՂՀ կառավարության 2000 թվականի հուլիս 11-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմավորման մասին» N138 որոշման 3-րդ կետի և 5-րդ կետի «ա» ենթակետի:

2. Սույն կարգը սահմանում է ԼՂՀ կառավարության 2000թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմավորման մասին» N 138 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգ»-ով (այսուհետ՝ ընդհանուր կարգ) հաստատված՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ոգելից խմիչքի ու էթիլային սպիրտի (ներառյալ՝ շշալցումը) և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ծխախոտի արտադրանքի մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների (տուփերի)» ցանկին (այսուհետ՝ թույլատրելի չափերով տարաների ցանկ) չհամապատասխանող տարաներով տարայավորված արտադրանքի (այսուհետև՝ դրոշմավորման ենթակա ապրանքների) դրոշմավորման համար դրոշմանիշերի տրամադրման առանձնահատկությունները:

II.Դրոշմավորման կարգ

3. Թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարողություններով (չափերով) տարայավորված արտադրանքները դրոշմավորվում են սույն կարգի հավելված 1-ում նշված անվանական տարողությամբ դրոշմանիշերին համապատասխանող դրոշմանիշերով:

4. Անհրաժեշտ անվանական տարողությամբ դրոշմանիշերի բացակայության դեպքում դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար կարող են տրամադրվել սույն կարգի 3-րդ կետով հաստատված հավելված 1-ում նշված անվանական տարողությամբ դրոշմանիշերից հերթական ցածր, իսկ ցածրերի բացակայության դեպքում հերթական բարձր անվանական տարողությամբ դրոշմանիշեր:

5. Թույլատրելի չափերով տարաների ցանկով սահմանված տարողությունների յուրաքանչյուր միջակայքի համար՝ դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրողները կարող են դիմում ներկայացնել միայն մեկ տարողությամբ տարայով (տուփով) տարայավորվող արտադրանքի դրոշմավորման համար դրոշմանիշեր ձեռք բերելու համար:

Դրոշմավորման ենթակա ոչ ստանդարտ տարաներով արտադրանքի դրոշմավորման համար դրոշմանիշերի տրամադրումից հետո, յուրաքանչյուր հաջորդ անգամ դրոշմանիշերի տրամադրումը կատարվում է սույն կարգի 2-ում նշված հաշվարկի ներկայացման դեպքում:

6. Դրոշմավորման ենթակա ոչ ստանդարտ տարաներով արտադրանքի դրոշմավորումը իրականացվում է ընդհանուր կարգին համապատասխան հարկային մարմնի հսկողության ներքո:

7. Սույն կարգին համապատասխան տրամադրված դրոշմանիշերով դրոշմանիշերի ձեռք բերման դիմումում չնշված տարողությամբ տարայավորված արտադրանքի դրոշմավորումը դիտվում է որպես դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման կանոնների խախտում՝ որը առաջացնում է ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների՝ սույն կարգին համապատասխան դրոշմավորման համար պատասխանատու են դրանք արտադրող անձինք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրված և սույն

կարգին համապատասխան չդրոշմավորված ապրանքները շրջանառության մեջ բացթողնելու համար պատասխանատու են դրանք շրջանառության մեջ բաց թողնող անձինք:

8. Արգելվում է սույն կարգին համապատասխան ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերի օտարումը կամ փոխանցումը (տրամադրումը, հատկացումը և այլն) այլ անձանց:

III. Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերումը և հաշվառումը

9. Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերումը իրականացվում է ընդհանուր կարգի համաձայն:

10. Ակցիզային հարկով հարկման ենթակա, և սույն կարգով սահմանված ձևով դրոշմավորված արտադրանքի համար ակցիզային հարկը հաշվարկելիս, հաշվի են առնվում տարաների իրական ծավալները:

11. Ակցիզային դրոշմանիշերի հաշվառումը, չօգտագործված ակցիզային դրոշմանիշերի վերադարձը իրականացվում է ընդհանուր կարգին համապատասխան:

12. Թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարաներով ապրանքներ արտադրող անձանց դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորման համար ակցիզային դրոշմանիշերի տրամադրումը կատարվում է նշված անձանց մոտ հարկային մարմինների կողմից դրոշմանիշերի պահանջի հիմնավորվածության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների հիման վրա կազմված տեղեկանքի առկայության դեպքում:

IV. Դրոշմավորման կարգի նկատմամբ հսկողությունը

13. Դրոշմավորման կարգի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական վարչությունը:

14. Սույն կարգի խախտումն առաջացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

Հավելված N 1

Մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարաներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

Ցանկ
տարաների (տուփերի) տարողություններին (ծավալներին) համապատասխանող ակցիզային դրոշմանիշերի

Ապրանքի անվանումը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Տարաների տարողությունները (տուփում գլանակների թիվը)	Համապատասխանող դրոշմանիշերը
2204,2205 2205,2208	Ոգելից խմիչքներ	մինչև 0.33լ	0.25լ
		0.33լ-ից մինչև 0.5լ	0.33լ
		0.5լ-ից մինչև 0.7լ	0.5լ
		0.7լ-ից մինչև 0.75լ	0.7լ
		0.75լ-ից մինչև 0.8լ	0.75լ
		0.8լ-ից ավելի	0.8լ
2207	էթիլային սպիրտ	մինչև 5լ	0.5լ
2402	Ծխախոտի արտադրանք, այդ թվում		
	սիգարետներ ֆիլտրով	մինչև 20 հատ	10
		20 և ավելի	20
	սիգարետներ առանց ֆիլտրի	մինչև 20 հատ	12
		20 և ավելի	20

Հավելված N 2

Մանրածախ առևտրի ոլորտում իրացման համար թույլատրելի չափերով տարաների ցանկին չհամապատասխանող տարաներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշերով պարտադիր դրոշմավորման կարգի

ԼՂՀ ՀՊՎ_____պետին
(Շ(Ք)ՀՏ կամ ԼՂՀ ՀՊՎ համապատասխան ստորաբաժանման անվանումը)

Գրանցման N____

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

200 թ._____ ամսվա համար

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

_____
(բանկային տվյալները, ՀՎՀՀ, պետական ռեգիստրում գրանցման համարը)

Հայտնում եմ, որ հաշվետու ամսում ստացել եմ ակցիզային դրոշմանիշեր՝ ընդհանուր թվով_____հատ

Այդ թվում

1._____ _____ դրոշմավորման համար
(դրոշմանիշերի տեսակը, ծավալը, թվագրումը) (արտադրանքի անվանումը և տարայի ծավալը)

2._____ _____ դրոշմավորման համար
(դրոշմանիշերի տեսակը, ծավալը, թվագրումը) (արտադրանքի անվանումը և տարայի ծավալը)

3._____ _____ դրոշմավորման համար
(դրոշմանիշերի տեսակը, ծավալը, թվագրումը) (արտադրանքի անվանումը և տարայի ծավալը)

Ցուցանիշ	Ակցիզային դրոշմանիշերի տեսակները		
	1	2	3
ա) դրոշմավորված արտադրանքի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին			
բ) դրոշմանիշերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին			
գ) ստացվել են դրոշմանիշեր			
դ) արտադրանքի դրոշմավորման համար օգտագործվել են			
ե) վերադարձվել են դրոշմանիշեր			
զ) դրոշմավորված արտադրանքից իրացվել է			
է) դրոշմավորված արտադրանքի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում			
ը) դրոշմանիշերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում			

Կազմակերպության տնօրեն _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Գլխավոր հաշվապահ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ. «___»_____200 թ.

Ծանոթություն «է» և «ը» կետերում զրո թվաքանակի դեպքում հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների համար տեղեկություն չի ներկայացվում: